
ՎԱՐԴԱՎԱՌԸ ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

«Պատմաբանասիրական հանդեսի» նախորդ համարում ընթերցողին ծանոթացրեցինք Ռեթիմնոն քաղաքում տեղակայված Կրետեի համալսարանի փիլիսոփայության (հասարակագիտական) ֆակուլտետի հարուստ գրադարանի հունարեն պարբերականներից ձեռք բերած հայագիտության առնչվող նյութերի, տվյալ դեպքում՝ հայ-հռոմներին վերաբերող երեք հոդվածների մեր հայերեն թարգմանությանը:

Ներկա երկու հոդվածները նվիրված են Վարդավառի տոնին և հավատացած ենք, որ պիտի հետաքրքրեն մեր ազգագրագետներին: Առաջին հոդվածի հեղինակն է Պավլոս Կարուլիդիսը՝ անվանի հույն գիտնական, ծագումով կապադովկացի, ինչը նրան հնարավորություն է տվել տեղյակ լինելու նաև տարածաշրջանի հայության և նրա հավատալիքներին ու նիստուկացին:

Պավլոս Կարուլիդիսը (1849-1930) հունական նոր պատմագրության ամենախոշոր դեմքերից մեկն է: Ծնվել է Կապադովկիայի Անդրոնիկիոնում (թրք. Էդիրնիկ, Կեսարիայի մոտ), վախճանվել Աթենքում: Ուսանել է Կոստանդնուպոլսի «Ազգի մեծ դպրոցում» (այլ կերպ՝ Կոստանդնուպոլսի պատրիարքական ակադեմիայում, որ կազմակերպվեց թուրքերի կողմից քաղաքի առումից հետո և հսկայական դեր խաղաց հելլենական տարրի ձուլման առաջն առնելու), Զմյուռնիայի ավետարանական դպրոցում, Աթենքի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետում, ապա նաև Մյունխենի, Տյուբինգենի և Ստրասբուրգի համալսարաններում: Զգալի գործունեություն ծավալեց նաև քաղաքականության մեջ. երիտթուրքերի շարժումից հետո թուրքական պառլամենտում ներկայացրեց հույն ընտրողներին որպես Այդինի պատգամավոր (1900-1912): Գլխավոր գործերից է «Կապադովկականքը» (Կոստանդնուպոլիս, 1874), «Ներածություն 19-րդ դարի պատմության» (Աթենք, 1891), «19-րդ դարի պատմություն» (երեք հատոր, Աթենք, 1892), «Դիգենիս Ակրիտասս էպոսը» (1906), «Հույների և Արևելքի այլ ժողովուրդների ժամանակակից պատմությունը 1821-ից մինչև 1921-ը» (յոթ հատոր, Աթենք, 1922-1929): Գլխավորել է Կ. Պապառիզոպոլոսի նշանավոր «Հույն ազգի պատմության» 5-րդ և 6-րդ հրատարակությունները (Աթենք, 1925 և 1932 թթ.)՝ լրացնելով նոր և նորագույն պատմության շարադրանքով:

Ստորև տրվում է «Վարդերի տոնին» նվիրված նրա հոդվածի մեր հայերեն թարգմանությունը: Հոդվածի հունարեն առանձին բառերի մասին. հունարենում «ռոդոն» վարդ է նշանակում, դրանից Ռոդիզմոսը՝ տոնակատարություն, որի ժամանակ գերեզմանները զարդարվում էին վարդերով, Անթիզմոսը՝ անթոս (ծաղիկ) բառից՝ ծաղկում, Անթեփորիա (բառացի՝ ծաղկաբերություն, Pascha rosarum (լատ. «Վարդերի Զատիկ), Վարտուվարիա (Վարդավառ հոգն.):

Վարդավառի տոնին նվիրված երկրորդ հոդվածի հեղինակն է Էմմ. Ցալիկոդլուն: Նա, ինչպես և Պ. Կարոլիդիսը, ծագում է Կապադովկիայից, բայց Ֆլավիանա գյուղից: Հունարենում գոյություն չունի «չ» հնչյուն, ուստի և համապատասխան տառ: Հույներն իրենց օտար «չ»-ն փոխարինում են «ց»-ով: Թեև կարող են արտասանել այն, բայց համապատասխան տառ չունեն: Այն ստանում են միացյալ «տս»-ով՝ «ց»: Հոդվածագրի ազգանվան առաջին «Ցալիկե-ը (Չալիկ) թուրքերեն բառ է, որ նշանակում է ծոված, կողքի թեքված: Իսկ այդ ազգանվան «ողլու» թուրքերեն բաղադրիչը («որդի») չի կարող ազգության ցուցիչ լինել, քանի որ լայնորեն տարածված է և՛ հայերիս, և՛ հույների միջավայրում: Եթե փորձենք «Չալիկոդլուն» հայացնել, ապա հանգիստ մեզ կտա Չալիկյանը: Հոդվածագրի հիմնական աղբյուրը Բեթղեհեմ Նիկոլայիդուն է (Նիկոդոսյան), ով հոդվածագրի հավաստմամբ Վարդավառի տոնի համար չի օգտագործում հունարեն Կլիդոնաս անվանումը, այլ Վերտուվարը, որ «այլ կանայք» Վարտուվար են ասում: Եթե հունարենը թողած հայերենն են օգտագործում, ապա հիշյալ կանայք՝ ստորև բերվող Վարդավառին վերաբերյալ ինը քառատող ոտանավորների ասացողները, ամենայն հավանականությամբ, թրքախոս հայուհիներ են:

ՀՐԱՉ ԲԱՐԹԻԿՅԱՆ*

Π. ΚΑΡΟΛΙΔΗΣ, Η ΕΟΡΤΗ ΤΩΝ ΡΟΔΩΝ (ΡΟΔΙΣΜΟΣ, ΑΝΘΙΣΜΟΣ, ΑΝΘΗΦΟΡΙΑ, ROSALIA, ΡΟΥΣΣΑΛΙΑ, PASCHA ROSARUM, ΒΑΡΤΟΥΒΑΡΙΑ, RUSSALKA), „ARMONIA,, ΕΠΙ ΣΤΗΜΟΝΙΚΟΝ ΠΕΡΙΟΔΙΚΟΝ ΣΥΓΓΡΑΜΜΑ, ΤΟΜΟΣ ΠΡΩΤΟΣ, ΕΝ ΑΘΗΝΑΙΣ, 1900, σελ. 201-206.

Պ. ԿԱՐՈՂԻԴԻՍ, ՎԱՐԴԵՐԻ ՏՈՆԸ (ՌՈՂԻԶՄՈՍ, ԱՆԹԻԶՄՈՍ, ԱՆԹԵՓՈՂԻՍ, ROSALIA, ՌՈՒՍՍԱԼԻՍ, PASCHA ROSARUM, ՎԱՐՏՈՒՎԱՐԻՍ, RUSSALKA): «ՀԱՐՄՈՆԻԱ», ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ, ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ, ԱԹԵՆՔ, 1900, էջ 201-206:

«Վարդերի Չատիկ» (Pascha Rosarum կամ Rosalia) միջնադարյան հայտնի տոներումնք համարեցին քրիստոնեական, ծայրահեղ դեպքում՝ իտալա-հռոմեական, հունական և սլավոնական երկրներում Իտալիայից տարածված: Miklosich-ը¹, որ գտնում է, թե տոնն ուներ զուտ քրիստոնեական ծագում՝ կապված Պենտեկոստեի (Հոգեգալստյան) տոնի հետ, Rosalia անունը գտավ սլավոնական բոլոր լեզուներում, իսկ ռուսական առասպելաբանության Russalka անվամբ հայտնի առասպելական

* Ստորև բերված հոդվածների ծանոթագրությունները հոդվածագիրներինն են: Իսկ նրանք, որոնց վերջում փակագծի մեջ մեր անվան-ազգանվան սկզբնատառերն են (Հ. Բ.), մերն են:

¹ Ֆրանցիսկ Միկլոսիչ (1813-1891)– ավստրիացի լեզվաբան, սլավոնական լեզուների ուսումնասիրող, 1850 թվականից սլավոնական բանասիրության դասախոս Վիեննայի համալսարանում: Նրա գլխավոր աշխատություններն են՝ «Սլավոնական լեզուների համեմատական քերականություն» (1852) և «Սլավոնական լեզուների ստուգաբանական բառարան» (1866): Ուսումնասիրեց սլավոնական, ինչպես և հարևան ժողովուրդների լեզուների (հունգարերեն, ռուսերեն և այլաներեն) փոխադարձ ազդեցությունները (Հ. Բ.):

կերպարները համարեց Rosalia տոնի առասպելական կերպարանավորում: Այս ենթադրությունը նա հակադրեց սլավոն բանասերներից ունանց (օրինակ՝ Schaffarik-ի² կարծիքը), ովքեր Russalka անունը բացատրում են սլավոնական լեզուներով և սկզբնական Russalka-ները համարում սլավոնական առասպելաբանության ջրի աստվածություններ³:

Բայց Tomaschek-ը Rosalia-ն կապեց Brumalia-յի⁴ հետ, ապացուցեց, որ Rosalia տոնը սկիզբ է առնում Հռոմի և Իտալիայի հեթանոսական պաշտամունքում⁵: Բյուզանդական շրջանում Ռուսսալիա անունը հանդիպում է ուշ շրջանի հեղինակների՝ Վալսամոնի⁶, Խոմատիանոսի⁷ և սուրբ Նիկողայոսի վարքագրի մոտ որպես հակաքրիստոնեական տոնի անուն, որ տոնի կատարման շվայտ ու անառակ ձևի համար եկեղեցու կողմից դատապարտվում էր: Նրանք ցույց են տալիս, որ Ռուսսալիա տոնը տարածված էր ավելի հյուսիսային՝ սլավոնա-հունական երկրներում⁸: Սա-

² Շաֆարիկ Պավել-Յոզեֆ (1795-1861).– չէի բանասեր և հնագետ: 1837 թ. հրատարակեց իր գլխավոր հետազոտությունը՝ «Սլավոնական հնություններ»: 1848 թ. սլավոնական բանասիրության դասախոս Պրագայում: Այլ գործերն են՝ «Բոհեմական լեզվի հին հուշարձանները» (1840), «Հին չեխերենի քերականության հիմնական սկզբունքները» (1845), «Սլավոնական ազգագրություն» (1842) (Հ. Բ.):

³ Wiener Sitzungsberichte, Bd. 46, S. 386-405.

⁴ Հին Հռոմում բրումալիա էր կոչվում տարվա ամենակարճ օրը՝ դեկտեմբերի արևադարձին կատարվող տոնակատարությունները: Առնչվում էին Կրոնիա տոնի հետ (Կրոնոս աստծուն նվիրված) և կրում Դեմետրայի ու Դիոնիսոսի տոների ազդեցությունը: Պլուտարքոսը «ստրուկների տոն» էր համարում, երբ վերջիններս ավարտում էին դաշտային աշխատանքները և, հնարավոր է, մասնակից էին դառնում նաև նրանց տերերը: Այդ օրը Դեմետրա աստվածուհու քրմերին նվիրաբերվում էին մրգեր, ձիթայուղ, ցորեն և այլն: Բյուզանդական շրջանում բրումալիան սկսվում էր նոյեմբերի 24-ին և տևում մինչև հունվարի 17-ը: Տոն օրերին բյուզանդական կայսրերը նվերներ էին շնորհում իրենց բարեկամներին, ազգականներին և արքունի ծառայողներին: 743 թ. Հռոմի սինոդի 9-րդ կանոնով այս տոնակատարությունները որպես հեթանոսական, կամ շվայտությամբ և անառակությամբ լի, արգելվեցին: Ժողովրդական շրջաններում, սակայն, գոյատևեցին մինչև ԺԲ դարը (Հ. Բ.):

⁵ Wiener Sitzungsberichte, Bd. 60, S. 351-404.

⁶ Վալսամոն Թեոդորոս– Իսահակ Բ կայսեր (1185-1195) միջնորդությամբ նշանակվեց Անտիոքի պատրիարք, բայց չկարողացավ գնալ այդ քաղաքը, քանի որ վերջինս գտնվում էր լատինների ձեռքում: Արևելյան Ուղղափառ եկեղեցու սբ. Կանոնների նշանավոր մեկնաբան: Մանուել Ա Կոմնենոսի (1143-1180) և Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայելի (1170-1177) հանձնարարությամբ շարադրեց Նոմոկանոնի տասնչորս գլխից բաղկացած մեկնությունը: Մեկնաբանեց նաև Եկեղեցու հայրերի ժողովական կանոնները: Արժեքավոր են նրա «Հետազոտությունները» պատրիարքական իրավունքների և խարտոֆիլաքսի ու պրոտեկտիկոսի (եպիսկոպոսական և պատրիարքական դատավորի) եկեղեցական պաշտոնների մասին: Գրել է կանոնական ամբողջական հետազոտություն՝ պատասխան Ալեքսանդրիայի պատրիարք Մարկոս Գ-ին (1180-1209) (Հ. Բ.):

⁷ Խոմատիանոս Դիմիտրիոս (ԺԲ-ԺԳ դդ.)– բյուզանդական մտավորական և օրենսգետ: Նախապես Ախրիդայի մետրոպոլիտոսության խարտոֆիլաքսի պաշտոնն էր վարում, 1215-1236 թթ. նույն քաղաքի մետրոպոլիտն էր: Գործուն մասնակցություն ունեցավ Նիկեայի և Էպիրոսի պետությունների միջև ծավալված քաղաքական ու եկեղեցական վեճերում: Նրա հեղինակային գործի մեծ մասը վերաբերում է իրավունքի շրջանակին (Հ. Բ.):

⁸ Վալսամոնը Տիեզերական Զ ժողովի 62-րդ կանոնի առնչությամբ գրում է. «Հռոմայեցիները սովորություն ունեն սրանց հիշատակին ամեն տարի հեթանոսաբար տոնախմբություններ կատարել և լպիրջ արարքներ գործել: Այդպիսի խորթ տոնախմբություն է և այսպես կոչված Ռուսալիան, որ վատ սովորության համաձայն նշվում է սուրբ Զատիկից հետո դրսի երկրներում»:

կայն վերոհիշյալ հեղինակների կողմից հիշվող այս Ռուսասլիայից բացի, հունական որոշ շրջաններում, հատկապես Պելոպոնեսում, մինչև օրս էլ պահպանվել է Ռուսալիու անունը, բայց ոչ վարդերի տոնի նշանակությամբ, այլ որպես հոգիների, այն է՝ ննջեցյալների տոն, որն ուղղափառ եկեղեցու կողմից նշվում է Պենտեկոստեին նախորդող շաբաթ օրը, տոն, որ հունական բոլոր շրջաններում կոչվում է պսիխոսավվատո⁹: Ժողովրդական մի ավանդության համաձայն, ննջեցյալների հոգիները, որոնք անդրշիրիմյան աշխարհից Ջատկին դուրս գալով հիսուն օր շրջում են երկրի վրա, հոգիների այդ շաբաթ օրը վերադառնում են անդրշիրիմյան աշխարհը: Հոգիների այս վերադարձն ուղեկցվում է ննջեցյալների բարեպաշտ ազգականների կողմից հանրաձայն, ինչպիսիք են հունական ուղղափառ եկեղեցում պրոսֆորան և կոլիվան¹⁰: Բայց այստեղ Ռուսալիու տոնը, թեև անվամբ Ռուսասլիայի և իտալական Rosalia-յի հետ նույնական է, ինչպես երևում է, ներքնապես ոչ մի առնչություն չունի իտալական Rosalia-յի կամ Վալսամոնի և Խոմատիանոսի կողմից դատապարտվող հակաքրիստոնեական սլավոնաիտալական Անթեստերիայի¹¹ (Ανθεστήρια) հետ, որ մեծամասամբ հոգիների կամ ննջեցյալների տոն էր:

Որ Ռուսասլիու անունը հոգիների կրոնական տոնի իմաստով, ինչպիսին այն պահպանվել է հունական մի շարք շրջաններում, բյուզանդական է, հավանական չէ, քանի որ Ռուսասլիուն համարվում էր հակաքրիստոնեական և հետապնդվում էր: Այդուհանդերձ բյուզանդացիներն ունեին և Ծաղկանց տոն՝ իտալա-հռոմեական Rosalia-ին համանման, և հոգիների տոն՝ հին Անթեստերիային համանման: Հինգերորդ դարից արդեն ծանոթ են «Վարդերի օրերը», որոնց մասին հիշում է Գազացի

Միկոլուիչը իր վերոհիշյալ աշխատության մեջ բերում է Բուլղարիայի արքեպիսկոպոս Դիմիտրիոսի հետևյալ հիշատակությունը. «Մոլիսկոս բանակաթեմի ժողովուրդը... այսպիսի մի մեղսոտ բանի մասին հայտնեց, թե իր երկրում Ռուսալիա կոչվող մի հին սովորույթ գոյություն ունի, Պենտեկոստեին հաջորդող շաբաթ երիտասարդները գյուղերով ման են գալիս և խաղեր կազմակերպում, պարեր և մուլեզին ոստումներ, բեմական տգեղություններ»:

⁹ Այդ մասին տե՛ս պրոֆ. Նիկոլայոս Պոլիտիսի հետազոտությունը՝ Ανατολική Ἐπιθεώρησις հանդեսում, հ. 4, էջ 97-161 [Պոլիտիս Նիկոլայոս (1852-1921)– Հույն բանասեր, ազգագրագետ, Աթենքի համալսարանի պրոֆեսոր: Մասնագիտացել է Հին և Նոր Հունաստանի, այլ ժողովուրդների բարբերի ու սովորույթների ուսումնասիրության մեջ: Հրատարակել է «Հետազոտություններ հույն ժողովրդի կենցաղի և լեզվի մասին» աշխատությունը: Հիմնադիրն է «Հունական ազգագրական ընկերության» (1908) (Հ. Բ.):

Պսիխոսավվատո (հուն. ψυχή – հոգի, σάββατο – շաբաթ օր)– Ուղղափառ եկեղեցին նշում է շաբաթ օրը վախճանվածներին նվիրված հիշատակը: Հնում կատարվում էին հոգեհանգստյան պատարագներ՝ հիշյալ օրը վախճանվածների հոգու հանգստյան համար: Բայց շատ շուտ հանգուցյալների հոգիներին նվիրված շաբաթներն էին Բարեկենդանի և Պանրուտի շաբաթ օրերն ու քառասնօրյա Մեծ Պահքի առաջին շաբաթ օրը: Պենտեկոստեի շաբաթը կոչվում է և Ռուսալիուի շաբաթ (լատ. rosaria) (Հ. Բ.):

¹⁰ Պրոսֆորան սուրբ հաղորդության համար հավատացյալների կողմից տրվող հացն է, կոլիվան՝ ննջեցյալների հոգիների համար մատուցված խաչած ցորենը՝ չոր մրգերով, բոված այլուրով և փոշի շաքարով խառնված (Հ. Բ.):

¹¹ Նշենք, որ հին Աթենքում գոյություն ուներ այս անվամբ եռօրյա տոն, որ կատարվում էր Դիոնիսոս աստծո պատվին՝ Անթեստերիոն (մարտ) ամսին (Հ. Բ.):

Հովհաննես Քերականը¹²: Այս տոնի բյուզանդական մի այլ անունն է Ռոդիզմոս¹³ (Ροδισμός): Այս անունը, որ Miklosich-ը գտավ միայն Ֆիլոքսենոսի¹⁴ բառարանի մի կասկածելի տեղում, Ροδισμός. Ros. alia, ես գտա ՄԱ դարում ապրած եկեղեցական գրող արքեպիսկոպոս Հովհաննես Եվխայիտոնի¹⁵ մոտ: Այդ հեղինակը Ռոդիզմոսի կողքին հիշում է և՛ Անթիզմոսը (Ανθισμός), և՛ Անթեփորիան¹⁶ (Ανθηφόρια): Բայց այս բոլոր անունները (Ռոդիզմոս, Անթիզմոս, Անթեփորիա) մի թե Rosalia բառի պարզ մեկնաբանումներն են: Մրա վերաբերյալ անհրաժեշտ եմ գտնում հայտնել հետևյալը:

Հովհաննես Եվխայիտոնը Ռոդիզմոսի կամ Անթիզմոսի կամ Անթեփորիայի տոները ներկայացնում է որպես Եվխայիտոնի տեղական տոն, կամ Կապադովկական Պոնտոսի, որտեղ, ինչպես և համայն Փոքր Ասիայում, Ռուսսալիա կամ Ռուսալիու անունը բացարձակապես անհայտ է: Արևմտյան Փոքր Ասիայում Վարդերի տոնը նշվում է Պենտեկոստեի օրը, կամ ավելի հավանական՝ սուրբ Հովհաննես Ֆանիտեայի (Հովհաննու ծննդյան օրը հունիսի 24-ին) Կլիդոնաս¹⁷ անունով, իսկ Արևելյան

¹² Գազացի Հովհաննես Քերական (VI դ.)– բանաստեղծ: Ծնվել է Հարավային Պաղեստինի Գազա քաղաքում, գործել է Հուստինիանոս I կայսեր ժամանակ (527-565): Հավանաբար, նկատի ունի հունական հին աստվածություններին նվիրված նրա վեց զվարճալի էպիգրամները (Հ. Բ.):

¹³ Ռոդիզմոս (Ռոդոն – վարդ բառից)– հանդես, որի ժամանակ գերեզմանները զարդարվում էին վարդերով (Հ. Բ.):

¹⁴ Ֆիլոքսենոս (մ. թ. ա. Ա դար)– ալեքսանդրացի քերական: Ապրել է հիմնականում Հռոմում: Գրել է հոմերական խնդիրների շուրջ ու կազմել նշանավոր բառարաններ հոմերական և հունական այլ բարբառների վերաբերյալ: Հիշվում է Սուդայի (Սվիդասի) բառարանում (Հ. Բ.):

¹⁵ Հովհաննես Եվխայիտոսը ՄԱ դարի բյուզանդական մտավորական էր (Եվխայիտոն, Փոքր Ասիայի մետրոպոլիտոսության կենտրոն: Գտնվում էր Ամասիայից հարավ-արևմուտք, Ալիս և Իրիս գետերի միջև: Այժմ կոչվում է Մեջիդ Ուզու), որ ավելի հայտնի է իր Մավրոպոլուս (Մևոսոն) մականունով: Բյուզանդական երկրորդ վերածննդի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկն էր: Կյանքի վերջերին վերադարձավ Կոստանդնուպոլիս և հաստատվեց սբ. Հովհաննես Կարապետի վանքում: 1047 թ. առաջ դասավանդում էր փիլիսոփայություն Կոստանդնուպոլիսի բարձրագույն դպրոցում: Նշանավոր փիլիսոփա Միքայել Պսելլոսը նրան ձոն է նվիրել (Հ. Բ.):

¹⁶ Թարգմանաբար՝ ծաղկում (փթթում) և ծաղկաբերություն (Հ. Բ.):

¹⁷ Կլիդոնաս (հուն. Κλήδονας)– գուշակական նոր հունական սովորույթ, որ իրակ անացվում էր սբ. Հովհաննու տոնին՝ հունիսի 24-ին: Տոնի նախօրեին, արևամտից հետո, չամուսնացած մի աղջիկ գնում և աղբյուրից կուժը լցնում է «անխոս» ջրով: Իր ճանապարհին եկող գնացողները փորձում են նրա հետ խոսել, սակայն նա չի պատասխանում՝ «անխոս» է: Ուստի իր կրած ջուրն էլ է «անխոս»: Այնուհետև գյուղի բոլոր աղջիկները ուղարկում են մի-մի ռիզիկարի, այսինքն՝ բախտ վկայող թանկագին իր, որ ցույց է տալիս մարդկանց «ռիզիկոն» (ճակատագիր, բախտ), որպես կանոն ոսկե կամ արծաթե զարդ, մատանի, ականջօղ, որին մի երիտասարդի անունն է տալիս: Ապա յուրաքանչյուրն այն գցում է «անխոս» ջրի մեջ, կարմիր թաշկինակով ծածկում կուժը, որը տեղադրվում է վարդենու կամ ծառի տակ: Աստղաշատ երկնքի տակ այն մնում է ամբողջ գիշեր, իսկ առավոտյան, արևածագից առաջ, տեղափոխվում տուն: Կեսօրին բոլոր աղջիկները հավաքվում, երգում և բացում են կլիդոնայի կուժը: Ապա չամուսնացած մի աղջիկ կուժից մեկ առ մեկ հանում է ռիզիկարին և տալիս յուրաքանչյուր աղջկա, որը հենց որ այն իր ձեռքն է առնում, արտասանում է մի երկտող ռոտանավոր: Որպես կանոն այս երկտողները վերաբերում են աղջիկների ցանկություններին ամուսնանալու, իրենց ապագա ամուսնու, իրենց «լավի» որոնման: Ռիզիկարները կամաց-կամաց վերջանում են, հերթով յուրաքանչյուր աղջիկ իր բերանը լցնում է մի կում «անխոս» ջրով, կանգնում լուսամուտի առջև և մնում մինչև որ լսի առաջին արական անունը: Այն պիտի լինի և այն մարդու անունը, ով իր հետ պիտի ամուսնանա (Հ. Բ.):

Փոքր Ասիայում՝ Վարտուվար անունով, որը թարգմանելով հայերեն և Կապադովկիայում խոսվող հունարեն, որոնցում *varti* նշանակում է վարդ (հմնտ. էռլական βρόδον -ը), պարզապես նշանակում է Ռոդոփորիա կամ Անթեփորիա: Հայոց եկեղեցում պահպանվել է *Vartavar* անունը որպես Քրիստոսի Այլակերպության տոնի անուն (նշվում է օգոստոսի 6-ին), որն սկզբնական շրջանում, ինչպես և մասամբ մինչև օրս, պտուղների տոն է, քանի որ արևելյան [ուղղափառ] եկեղեցին այդ օրը հատուկ աղոթքով օրհնում է խաղողի երևալը: Հայերը, որ իրենք էլ ունեն ծաղիկների տոն՝ Համբարձման կամ Պենտեկոստեի օրը, այդ տոնը կոչում են ոչ թե Վարդավառ կամ Անթեփորիա, այլ Վիճակ (ըստ հունարենի՝ կլիդոնաս, ռիզիկա): Վարտուվարը որպես ծաղկանց տոն, Արևելյան Փոքր Ասիայի առանձին վայրերում նշվում է Պենտեկոստեին նախորդող կիրակի օրը (Սրբոց հարանց կիրակի), երբ նախատոնական օրերն սկսվում են Համբարձման նախօրեից, իսկ այլ վայրերում՝ սուրբ Հովհաննես Ֆանիոտեսի օրը (հունիսի 24-ին), որը և կոչվում է Վարտուվարի սբ. Հովհաննու օր կամ տոն: Հովհաննես Եվխայիտոնի ասածներից պարզ է դառնում, որ իր ժամանակ Ռոդոփոսի կամ Անթիզոսի տոնը նշվում էր հունիսի 9-ին, բացի այդ, որ Անթեփորիան, Ռոդոփոսը և Անթիզոսը Պոնտոսում նշվող Ծաղկանց տոնի գործածական անունները չէին, այլ թարգմանությունը տոնի տեղական ինչ-որ անվան, որն ամենայն հավանականությամբ Վարտուվարն էր¹⁸: Ամեն տեսակետից անհավանական է, որ Վարտուվար անունը հայ-փոքրասիական թարգմանությունն է իտալական Rosalia-յի: Վարտուվար, Rosalia, Անթեստերիա (և սիկիլիացիների Անթեփորիան) հնում հայ-փոքրասիական, հունական և իտալական ժողովուրդների համար ընդհանուր Ծաղկանց տոնի կամ բնության զարթոնքի անուններն են: Արժե նշել, որ Պոնտոսում դեռ Հովհաննես Եվխայիտոնի ժամանակ, Ծաղկանց տոնը կապվում էր Պոնտոսն ավերող սարսափելի վիշապին ոչնչացնող սբ. Թեոդորոսի հետ, այդ երիտասարդ ու գեղեցիկ զինվորի և մարտիրոսի, հայկական առասպելների Վահագն վիշապաքաղի¹⁹, որ իր փթթող երիտասարդությամբ ու գեղեցկությամբ կյանքն է կերպավորում, զարնան ու ծաղկանց գեղեցկությունը, խավարի վիշապին պարտության մատնած լույս, ծաղկյալ և ծաղկածածկյալ Թեոդորոսի, ինչպես նրան կոչում է Հովհաննեսը, Թեոդորոսի, որի հիշատակը նշվում է Ծաղկանց տոնի ժամանակ:

Բայց Ծաղկանց տոնի զուգորդումը ծաղկյալ և ծաղկածածկյալ²⁰ Թեոդորոսի հետ, մեզ բացում է Փոքր Ասիայի Անթեստերիայի հետ ընդհանուր Անթեփորիա կամ Վարտուվար տոնի մի այլ հանգամանքն ու հատկությունը:

Ինչպես ասացինք սկզբում, Պելոպոնեսում Ռուսսալիու տոնը հոգիների կամ ննջեցյալների տոն է: Հայտնի է, անտիկ Անթեստերիան էլ մասամբ հոգիների տոն էր (այստեղից էլ, հավանաբար, և «Դու ըս կարիացիներ, այլևս ո՛չ Անթեստերիա»),

¹⁸ Ἰωάννου τοῦ ἀγιωτάτου μητροπολίτου Εὐχαΐτων εἰς τὴν μνήμην τοῦ ἀγίου μεγαλομάρτυρος Θεοδώρου τοῦ Τήρωνος ἦτοι τοῦ Ἀνθισμοῦ. «... Ἦρα *աննչությամբ այժմ հիշենք Անթեփորիա տոնը, որ արդեն կոչվում է Ռոդոփոս և Անթիզոս*»:

¹⁹ Պ. Կարոլիդիսը նրան նույնացնում է Հերակլեսի հետ (Հ. Բ.):

²⁰ Հովհաննես Եվխայիտոնի կողմից սբ. Թեոդորոսին տրվող այս ածականները հավանաբար թարգմանություններն են Վարտուվարի, որը Կապադովկիայում հունիսի 24-ին տոնվող սբ. Հովհաննեսի մականունն է՝ «Վարտուվարի սբ. Հովհաննես»:

տոնի երրորդ օրն էլ՝ Χύτροι [Կաթսաներ], նվիրված էր ննջեցյալներին: Այդ օրը կաթսաների մեջ եփում էին պանսպերմիան, ամեն տեսակ հունդերի խառնուրդը, որը, ինչպես երևում է, այսօրվա կոլիվայի նման էր: Միկիլիայի Անթեփոռիան էլ, գուգակցվելով Պերսեփոնեի առևանգման մասին առասպելներով²¹, վկայում է տոնի ննջեցյալների հետ ունեցած առնչությունը: Բնական ու տրամաբանական է, որ և վերածնվող բնության տոնը անուղղակիորեն կապվեր մահվան գաղափարի և ննջեցյալների հիշատակի հետ: Այժմ Փոքր Ասիայի Վարտուվար տոնը ոչնչով չի առնչվում ննջեցյալների հետ, ոչ էլ կրոնի: Վարտուվարն այսօր նշվում է ինչպես կլիդոնաար, որպես ծաղկանց բնական սովորական տոն, հատկապես վիճակ քաշելով և յուրաքանչյուր վիճակի հետ երգերում բախտի գուշակմամբ: Բայց որ ավելի հին ժամանակներում, գոնե Հովհաննես Եվիսայիտոնի ժամանակ (այսինքն՝ ԺԱ դարում) Վարտուվարը կապ ուներ ննջեցյալների հետ, դա հաստատվում է դրանով, որ Անթիզմոսի տոնը գուգակցվում էր ծաղկածածկյալ Թեոդորոսի հետ: Ծաղիկն ու բնության կյանքը, ծաղկածածկյալ Թեոդորոսը բացասական էր ներկայացնում և՛ մահը, և՛ երիտասարդության ուժի ու գեղեցկության թառամելը, դրա համար էլ նրա տոնի օրը նաև ննջեցյալների տոնի օրն էր (այստեղից էլ, հավանաբար, սկիզբ են առնում գույգ Թեոդորոսները՝ Թեոդորոս Տիրոնը և Թեոդորոս Ջորավարը, այնպես ինչպես սբ. Գևորգի համար գույգ տոն հաստատվեց, զարնան և ձևոան սկզբին): Հայտնի է, որ Արևելյան ուղղափառ եկեղեցին այժմ սբ. Թեոդորոսի տոնը չի նշում հունիսի 9-ին, ինչպես Հովհաննես Եվիսայիտոնի ժամանակ ԺԱ դարում տոնվում էր Պոնտոսում, այլ փետրվարի 26-ին, նաև Մեծ պահքի առաջին շաբաթ օրը: Ուղղափառ եկեղեցին սբ. Թեոդորոսի առնչությունը ննջեցյալների հետ պահպանել է սբ. Թեոդորոսի՝ Մեծ պահքի առաջին շաբաթ օրը նշվող տոնի մեջ: Այդ օրը միաժամանակ հոգիների և կոլիվաների տոն է, բայց նվիրված ոչ հատուկ կոլիվաներին կամ միսթարիչ ընծաներին դեպի ննջեցյալները, այլ որպես ընդհանրապես բնության պտուղի: Դա պարզվում է սբ. Թեոդորոսի տոնի նախօրեին քահանայի՝ կոլիվաների վրա կարդացած աղոթքից²²: Ճշմարիտ է, որ այս ավանդույթը, ինչ-որ ձգված ձևով, կոլիվաների առնչությունը սբ. Թեոդորոսի հետ կապում է Հուլիանոս Ուրացողի ժամանակ կուռքերին գոհաբերված կենդանիների մսով շուկայի մթերքը պղծելու հետ: Որպեսզի քրիստոնյաները չճաշակեն պղծված այդ մթերքը, սբ. Թեոդորոսը պատրիարք Եվդոքսոսին²³ առաջարկեց որպես սննդամթերք կոլիվա օգ-

²¹ Հին հունական առասպելաբանության մեջ Պերսեփոնեի բնության զարթոնքի աստվածություն էր, ապա նաև անդրշիրիմյան աշխարհի թագուհին, Հադեսի կինը, Դեմետրայի՝ Մայր Երկրի դուստրը: Էլևսիյան Միստերիաների գլխավոր կետը Պերսեփոնեի առևանգումն է Հադեսի կողմից (Հ. Բ.):

²² Աղոթքը հետևյալն է. «Ամեն ինչ բանիվ Քո կատարած, Տեր, որ հրամայեցիր հողին բազմապիսի պտուղներ աճեցնել՝ ի վայելումն և ի սնունդ մեր, Բաբելոնի փափկակենցաղ երեք մանկանց ու Դանիելին էլ՝ ավելի փառավորեցնողդ, ո՛վ ամենաբարի արքա, այս հատիկներն էլ տարբեր պտուղների հետ օրհնիր...»:

²³ Եվդոքսոս– Անտիոքի եպիսկոպոս, ապա՝ Կոստանդնուպոլսի պատրիարք (360-369): Ծագում էր Փոքր Հայքի Արաբիսու քաղաքից, քրիստոնյաների վերջին հալածանքների ժամանակ նահատակված Կեսարիոսի որդին: Շուրջ 357 թ. Գերմանիկեի (Մարաշ) եպիսկոպոսն էր: Հայացքներով արիոսական: Կոստանդնուս կայսրը Անկյուրայի եպիսկոպոս Բարսեղի դրդմամբ ընդդիմացավ նրան և վերջինս քաշվեց Հայաստան: Երկրորդ տիեզերական ժողովը (Կոստանդնուպոլիս, 381 թ.) դատապարտեց և նրա հիշատակը (Հ. Բ.):

տագործել: Բայց նույն այդ ավանդությունը հստակ վկայում է, որ կոլիվաները մինչ այդ ծանոթ էին միայն Եվխայիտայում, այսինքն՝ Պոնտոսում, և որ կոլիվա բառը պոնտական էր: Հետագայում, որպես այդպիսին սկիզբ առած կոլիվան օգտագործվում է միայն ննջեցյալների հոգեհանգստյանը:

Վերևում ասվածից հանգում ենք հետևյալ եզրակացության. ա) Փոքր Ասիայի Անթեփորիան կամ Վարտուվարը Ծաղկանց և ցորենի տոն էր, ավելի լայն իմաստով՝ վերափթթող բնության տոն: բ) Հոգիների տոն էր, որով նրանք՝ Անթեփորիան կամ Վարտուվարը, սերտ կապ ունեն իտալական Rosalia-յի հետ և հատկապես կրկնակի կապ Անթեստերիայի: Բայց միաժամանակ նաև վիճակի տոն էին, և հիշեցնում են Եսթերի գրքում²⁴ հրեական համարվող, բայց, ինչպես երևում է, համայն Արևմտյան Ասիայում նշվում Պինրիմ տոնը:

ΕΜΜ. ΤΣΑΛΙΚΟΓΛΟΥ. ΛΑΟΓΡΑΦΙΚΑ ΤΩΝ ΦΛΑΒΙΑΝΩΝ (ΖΙΝΤΙ ΝΤΕΡΕ) ΚΑΙ ΣΑΡΕΙΑΣ ΤΗΣ ΚΑΠΠΑΔΟΚΙΑΣ. «ΜΙΚΡΑΣΙΑΤΙΚΑ ΧΡΟΝΙΚΑ», ΣΥΓΓΡΑΜΜΑ ΠΕΡΙΟΔΙΚΟΝ ΕΚΔΙΔΟΜΕΝΟΝ ΥΠΟ ΤΟΥ ΤΜΗΜΑΤΟΣ ΜΙΚΡΑΣΙΑΤΙΚΩΝ ΜΕΛΕΤΩΝ ΤΗΣ ΕΝΩΣΕΩΣ ΣΜΥΡΝΑΙΩΝ, ΤΟΜΟΣ ΔΕΚΑΤΟΣ ΤΕΤΑΡΤΟΣ, ΑΘΗΝΑΙ, 1967, σελ. 290-337.

ԷՄՄ. ՅԱԼԻԿՈՂԼՈՒ, ԱԶԳԱԳՐԱԿԱՆՔ ԿԱՊԱԴՆՈՎԿԻԱՅԻ ԿԵՍԱՐԻԱՅԻ ՃԼԱՎԻԱՆԱ [ԳՅՈՒՂԻ] (ԶԻՆՂԻ ԴԵՐԵ)1: «ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ», ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, ՀԱՏՈՐ ՏԱՄՆՉՈՐՍԵՐՈՐԴ, ԱԹԵՆՔ, 1967, էջ 290-337:

ԿԼԻԴՈՆԱՍՄ²⁵ – «ՎԵՐՏՈՒՎԱՐ»²⁶

Համբարձման տոնին նախորդող չորեքշաբթի օրը մեր գյուղի «Պելեմե»²⁷ կոչվող տեղում գտնվող Համբարձման կիսավեր եկեղեցում պատարագ է մատուցվում: Այդ օրը մեր բազմաթիվ ուխտավոր համապոլիտացիներ իրենց ուտելիքներով այնտեղ էին գնում: Պատարագի ավարտից հետո ուխտավորները խմբերի բաժանված, ծառերի ստվերի տակ ճաշելուց հետո զվարճանում էին:

²⁴ Եսթերի գիրքը – Հին Կտակարանի գրքերից մեկն է (Հ. Բ.):

²⁵ Հոդվածագիրը հաճախ «Վարտուվարի» փոխարեն օգտագործում է «Կլիդոնասը», որի բացատրությունը տվել ենք նախորդ՝ Պ. Կարոլիդիսի հոդվածի վերջում (Հ. Բ.):

²⁶ Իմ գյուղում նշվող Կլիդոնասի վերաբերյալ իմացածս տարբեր աղբյուրներով խաչաձևելու համար ես դիմեցի և տիկին Բեթդեհեմ Նիկոլայիդուին, որը լրացրեց իմ ունեցած տեղեկությունները: Քանի որ նա բազմիցս մասնակցել է Կլիդոնասի տոնակատարությանը, նրա նշած օրը, իմ կարծիքով, պետք է ճիշտ համարվի: Նա Կլիդոնասը կոչում է «Վերտուվար», ուրիշ կանայք՝ «Վարտուվար»: Սակայն կապադովկացի գիտուն Անաստասիոս Լևիդիսը իր «Հունարեն-թուրքերեն» բառարանում Կլիդոնասը թուրքերեն թարգմանում է «վախտը վար»՝ «նա իր ժամանակն ունի» («Վախտը վար»-ը ոչ թե Կլիդոնասի թարգմանությունն է, այլ աղավաղված Վարդավառ բառը – Հ. Բ.): Ուրիշների ասելով Կլիդոնասը նշվում է հունիսի 24-ին:

²⁷ I. H. K' α' λ φ ο γ λ ο υ. Μονή Φλαβιανών, σελ. 43-44.

Հաջորդ օրը, այսինքն՝ հինգշաբթի, իրենց ուտելիքներով «Պելեմե» էին գնում զվարճանալու նորապսակները, նշանվածները, աղջիկները և բազմաթիվ ընտանիքներ: Այն ընտանիքները, որոնք փեսա ունեին, եթե ցանկանային, ձու էին ներկում:

Կլիդոնասին մասնակից դառնալ ցանկացող աղջիկները նույն օրվա երեկոյան, հենց որ վերադառնում էին «Պելեմեից», խմբեր կազմած գնում էին արտերը, յուրաքանչյուրը նախօրոք իր հետ վերցնելով մեկ մկրատ և տարբեր գույնի յոթը մետաքսե թել կամ դիպակներ: Նշանակություն չունեին ինչ գույնի, միայն պետք է տարբեր գույնի լինեին: Յուրաքանչյուր աղջիկ իր ամեն մի թելով իրար էր կապում 3-4 հասկ՝ մեջքից, նախապես մկրատով կտրելով հասկերի ծայրը կամ գլուխը: Նախքան տուն վերադառնալը նրանք որոշում էին այն տեղը, որտեղ պիտի հանդիպեին հաջորդ՝ ուրբաթ օրվա արշալույսին: Այդ օրվա առավոտյան ժամերին՝ արևածագից առաջ, հանդիպման վայրից միասին, առանց միմյանց հետ խոսելու, ուղղվում էին դեպի արտը, որտեղ նախորդ օրվա երեկոյան թելերով կապել էին իրենց հասկերը: Քանի դեռ հասկերը արմատախիլ չէին արել, իրավունք չկար խոսելու: Արտում, երբ յուրաքանչյուրը գտնում էր ու ճանաչում իր հասկերը, քաշում հանում էր արմատով: Բոլոր հասկերը արմատախիլ անելուց հետո, աղջիկները դադարում էին լուռ մնալուց: Ոմանք, եթե կամենային, իրենց որևէ ցանկության իրականացումը կապում էին իրենց մկրատով կտրած հասկերի սվյալ գիշերվա ընթացքում ցուցաբերած աճի հետ: Օրինակ, եթե գտնում էին, թե Կլիդոնասի իրենց կտրած հասկերը գիշերվա ընթացքում բավականին մեծացել, աճել էին, դա համարում էին ցանկությունների իրականացման նշան: Արմատախիլ արված հասկերը տանում էին տուն, որտեղ պիտի տեղի ունենար «Վարտուվարը», և դրանք կանգնած զետեղում ջրով լի մի տաշտի մեջ:

Հասկերի արմատախիլ արվելը, ինչպես նշեցի վերևում, կատարվում էր ուրբաթ օրը, արևածագից առաջ: Այդ, նաև շաբաթ օրը, հասկերը ջրի մեջ էին մնում անծածկ: Եվ այսպես, մինչև կիրակի, հասկերի կտրված տեղերը կրկին աճում էին: Իսկ կիրակի օրը, այսինքն՝ Համբարձման տոնին անմիջապես հաջորդող կիրակին, կոչում էին Վարտուվարի կիրակի («Վերտուվար բազարը»):

Կիրակի օրը՝ իրենց կեսօրվա ճաշից հետո, հասկերը փռում էին ջրով լի տաշտի մեջ և սկսում էր Կլիդոնասի արարողությունը: Առաջին ծնունդ հանդիսացող մի աղջիկ («անանըն իլք կըզը») դառնում էր Վերտուվարի հարսը («Վերտուվար գելինի»), նրա աչքերը թաշկինակով կամ այլ շորով կապում էին: Այնուհետև ջանում էին, որ նա նստի ջրով լի տաշտի առջև, այն տաշտի, որի մեջ էին իրենց արմատներով հասկերը: Հարմար շորով ծածկում էին հարսին և տաշտը: Կլիդոնասին մասնակցող աղջիկները տաշտի մեջ տարբեր առարկաներ էին զցում, իսկ մասնակիցներից երկուսը մի տեղ նստած դափ էին խփում և երգում Կլիդոնասի հայտնի ոտանավորները: Յուրաքանչյուր ոտանավորի ավարտին հարսը տաշտի միջից հանում էր մի ափ առարկա, եթե ցանկանար՝ միայն մեկ առարկա: Եվ այսպես Կլիդոնասի մասնակիցները գուշակում էին իրենց բախտը: Եթե կամենային կարող էին տաշտը երկրորդ և ավելի անգամ առարկաներ զցել, որպեսզի մի անգամ ևս փորձեն իրենց բախտը:

Ստորև բերում եմ իմ գյուղի Կլիդոնասի թուրքերեն ոտանավորները, որոնք հաղորդեցին ինձ տեղյակ կանայք:

1*

Ayne attım çağıra
Şavkı düştü bağıra
Kız öksüz, oğlan öksüz
Sonunu mevlân kâğıra.

*Մարգագետինը հայելի գցեցի,
Արտացոլումն ընկավ լանջին:
Աղջիկը որք, տղան որք
Աստված բախտի արժանացնի:*

Մեկնությունը. սա համարվում էր ոչ բարի նշան:

2

Uzanmış kavak gibi
Eşkimiş koruk gibi
Ne gezen mahale mahale
Yolunmuş tavuk gibi.
*Բարձրացել է բարդու նման
Թթվել՝ ինչպես խակ խաղող:
Ի՞նչ էս թափառում թաղից թաղ
Փետրած հավի նման:*

Մեկնությունը. ամուսինը լավը չի լինելու:

3

Ay vartuvar, vartuvar,
Vartuvarın vakti var
Vartuvara gidenin
Yedi yerde tâhti var.

*Այ, վարտուվար, վարտուվար
Վարտուվարի ժամը կա,
Ով որ գնա վարտուվարի
Յոթը տեղում թախտ ունի նա:*

Մեկնությունը. բախտավորություն:

4

* Էմմ. Չալիկողլուն թուրքերեն բնագիրը բերում է հունարեն տառերով: Նկատի ունենալով հունարենի սահմանափակ հնչյունները և դրա հետ կապված թուրքերեն բառերի հնարավոր աղավաղումները, մեր խնդրանքով այն ժամանակակից լատինատառ թուրքերենի է վերածել ակադ. Մանվել Զուլայյանը (Հ. Բ.):

Ay zeytine, zeytine,
Zeytinin iyisine
Ben bahtımı sınađım
Yigitin iyisine.
*Այ ձիթապտուղ, ձիթապտուղ,
Ձիթապտղի լավը,
Ես իմ բախտը փորձեցի
Լավ կտրիճի վրա:*

Մեկնությունը. ամուսնությունը հաջող է լինելու:

5

Damda melâyik gezer
Şaçını yağlar gezer
Elinde tivit kâlem
Hristos'un ismini yazar.
*Հրեշտակ է քայլում տանիքի վրա,
Մազերը յուղած քայլում է նա,
Թուղթ ու գրիչ բռնած ձեռքին,
Անունն է գրում նա Քրիստոսի:*

Մեկնությունը. բացառիկ բախտ:

6

Damdan dama yörürsün
Samur kürkü sürürsün
Allah kısmet ederse
Kudus şerife gidersin.
*Մի տանիքից մյուսն էս անցնում,
Մամուրե մուշտակը քաշում:
Թե որ Աստված կամենա,
Երուսաղեմ կգնաս:*

*Մեկնությունը. պիտի Սուրբ Երկիրն այցելի և որպես լավ քրիստոնյա, իր ջերմ
ցանկությունը պիտի իրականանա: Պիտի բարի բախտ ունենա:*

Չավեշտալի ոտանավորներ

1

Kırık sağısı parası
Eri Şamdan gelesi,
Vurub kafasına yarası.
*Արժեքը՝ ջարդած մի թաղար,
Դամասկոսից մարդդ գա
Խփի, ջարդի քո գլուխ:*

Մեկնությունը. չար բախտ, անհաջող ամուսնություն:

2

Vartuvarın var olsun
Dört yanı duvar olsun
Arkada çiban çıksın
Oturmaya zor olsun.
*Վարտուվարը քո կեցցե,
Չորս պատերի մեջ փակված մնաս
Հետույքիդ վրա չիբան դուրս գա,
Որ նստելի դժվարանա:*

Մեկնությունը. նախազգուշացում գալիք դժբախտությունների և նեղությունների:

3

Kayınanem kazan karası
Görümcem ciyer yarası
Ikisi birden ölesi.
*Կեսուրս՝ կաթսայի մուր
Տալս՝ լյարդի վրայի վերք:
Երնեկ երկուսը մեկեն մեռնեին:*

Մեկնությունը. հարսի համակեցությունը սկեսրոջ ու տալի հետ, նրանց փոխհարաբերությունները լավ ու բարի չեն լինելու:

*Ինչպես ինձ հաղորդել են տեղյակ կանայք, Կլիդոնասին մասնակցում էին
ինչպես չամուսնացած, այնպես և ամուսնացած ու տարեց կանայք, թաղի բոլոր կանայք:*